ՎԱՐԿ ՀԱՄԱՐ 9389-ԱՄ

Վարկային համաձայնագիր

(«Կրթության բարելավում» ծրագրի լրացուցիչ ֆինանսավորում)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

եւ

ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԿԻ

միջեւ

ՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ (Վարկառու) եւ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԿԻ (Բանկ) միջեւ Ստորագրման ամսաթվով թվագրված ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ՝ Սկզբնական ծրագրի (ինչպես սահմանվում է սույն Համաձայնագրի հավելվածում) եւ առնչվող միջոցառումների համար լրացուցիչ ֆինանսավորում տրամադրելու նպատակով: Վարկառուն եւ Բանկը սույնով համաձայնում են հետեւյալի վերաբերյալ.

ՀՈԴՎԱԾ I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՅՄԱՆՆԵՐ, ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ

1.01. Ընդհանուր պայմանները (ինչպես սահմանված է սույն Համաձայնագրի Հավելվածում) վերաբերում են սույն Համաձայնագրին եւ դրա մասն են կազմում:

1.02. Եթե համատեքստն այլ բան չի պահանջում, սույն Համաձայնագրում մեծատառով օգտագործված եզրույթները գործածվում են Ընդհանուր պայմաններում կամ սույն Համաձայնագրի Հավելվածում դրանց վերագրվող իմաստով:

ՀՈԴՎԱԾ II. ՎԱՐԿԸ

2.01. Բանկը համաձայնում է Վարկառուին տրամադրել քսաներկու միլիոն վեց հարյուր հազար եվրո (€ 22,600,000) գումարի չափով վարկ, որը կարող է ժամանակ առ ժամանակ փոխարկվել արժույթի փոխարկմամբ (Վարկ)՝ սույն Համաձայնագրի 1-ին Առդիրում նկարագրված ծրագրի (Ծրագիր) ֆինանսավորմանն աջակցելու նպատակով:

2.02. Վարկառուն կարող է Վարկային միջոցներն առհանել սույն Համաձայնագրի 2-րդ Առդիրի III Բաժնի համաձայն:

2.03. Սկզբնավճարը հավասար է Վարկի գումարի մեկ քառորդ տոկոսին (0.25%):

2.04. Պարտավճարը սահմանվում է տարեկան Վարկի չառհանված մնացորդի մեկ քառորդ տոկոսի (0.25%) չափով:

2.05. Տոկոսադրույքը Հաշվարկային դրույքաչափն է՝ գումարած Փոփոխական սփրեդը, կամ այնպիսի դրույքաչափն է, որը կարող է կիրառվել Փոխարկումից հետո՝ Ընդհանուր պայմանների 3.02(ե) Բաժնի համաձայն:

2.06. Յուրաքանչյուր տարվա համար Մարման ամսաթվերն են փետրվարի 15-ը եւ օգոստոսի 15-ը:

2.07. Վարկի մայր գումարը մարվում է սույն Համաձայնագրի 3-րդ Առդիրի համաձայն:

ՀՈԴՎԱԾ III. ԾՐԱԳԻՐԸ

3.01. Վարկառուն հայտարարում է Ծրագրի նպատակների հետ կապված իր հանձնառության մասին: Այս նպատակով Վարկառուն Ծրագիրն իրականացնում է ԿԳՄՄՆ-ի միջոցով՝ Ընդհանուր պայմանների V Հոդվածի դրույթների եւ սույն Համաձայնագրի 2-րդ Առդիրի համաձայն:

ՀՈԴՎԱԾ IV. ԲԱՆԿԻ ԻՐԱՎԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ

4.01. Կասեցման լրացուցիչ դեպքերը հետեւյալն են.

ա) ԿՏԱԿ-ի օրենսդրությունը փոփոխվել, կասեցվել, չեղյալ է հայտարարվել, այն ուժը կորցրել է, կամ դրանում սահմանված իրավունքներից հրաժարվել են այնպես, որ դա կարող է էականորեն եւ բացասաբար ազդել ԿՏԱԿ-ի՝ Օժանդակ պայմանագրով նախատեսված իր պարտավորություններից որեւէ մեկը կատարելու կարողության վրա:

բ) Վարկառուն ձեռնարկել է կամ թույլատրել է ձեռնարկել որեւէ գործողություն, որը կկանխի կամ կխոչընդոտի ԿՏԱԿ-ի կողմից Օժանդակ պայմանագրով նախատեսված իր պարտավորությունների կատարումը:

4.02. Վարկի անհապաղ մարման հանգեցնող լրացուցիչ իրադարձություններն են՝

ա) սույն Համաձայնագրի 4.01 Բաժնի «ա» կետում նշված իրադարձությունը:

բ) սույն Համաձայնագրի 4.01 Բաժնի «բ» պարբերությունում նշված իրադարձությունը տեղի ունենալու եւ Բանկի կողմից Վարկառուին իրադարձության մասին ծանուցումից հետո 60 օր շարունակվելու դեպքը:

ՀՈԴՎԱԾ V. ՈՒԺԻ ՄԵՋ ՄՏՆԵԼԸ, ԴԱԴԱՐԵՑՈՒՄԸ

5.01. Ուժի մեջ մտնելու Լրացուցիչ պայմանները մասնավորապես ներառում են Վարկառուի կողմից Ծրագրի գործառնական ձեռնարկն ընդունելը:

5.02. Ուժի մեջ մտնելու վերջնաժամկետը Ստորագրման ամսաթվից հետո հարյուր ութսուներորդ (180) օրն է:

5.03. Ընդհանուր պայմանների Բաժին 9.05 «բ»-ի նպատակներով, սույն Համաձայնագրի շրջանակներում Վարկառուի պարտավորությունների դադարման (բացի վճարման պարտավորությունից) օր է համարվում Ստորագրման օրվանից հետո [քսան] տարին:

ՀՈԴՎԱԾ VI. ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉԸ, ՀԱՍՑԵՆԵՐԸ

6.01. Վարկառուի ներկայացուցիչը ֆինանսների նախարարն է:

6.02. Ընդհանուր պայմանների 10.01 Բաժնի նպատակով՝ ա) Վարկառուի հասցեն է՝

Հայաստանի Հանրապետություն

0010, Երեւան

Մելիք-Ադամյան փողոց 1

Կառավարական տուն

Ֆինանսների նախարարություն, եւ

բ) Վարկառուի էլեկտրոնային հասցեն է՝

Տելեքս՝	Էլ.փոստ՝	Ֆաքսիմիլ՝
374 11 800 156	secretariat@minfin.am	374 11 800 132

6.03. Ընդհանուր պայմանների 10.01 Բաժնի նպատակներով՝ ա) Բանկի հասցեն է՝

International Bank for Reconstruction and Development

1818 H Street, N.W.

Washington, D.C. 20433

United States of America; and

բ) Բանկի էլեկտրոնային հասցեն է՝

Տելեքս	Ֆաքսիմիլ
248423(MCI) or	1-202-477-6391
64145(MCI)	

ՀԱՄԱՁԱՅՆԵՑՎԱԾ Է Ստորագրման ամսաթվի դրությամբ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

_____ կողմից

Լիազորված ներկայացուցիչ

Անունը՝ Տիգրան Խաչատրյան

Պաշտոնը՝ ՀՀ ֆինանսների նախարար

Ամսաթիվը՝ 9 հունիս, 2022

ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԿ՝

_____ կողմից

Լիազոր ներկայացուցիչ

Անունը՝ Կարոլին Գեգինատ

Պաշտոնը՝ ՀԲ Հայաստանի գրասենյակի ղեկավար

Ամսաթիվը՝ 9 հունիս, 2022

ԱՌԴԻՐ 1

Ծրագրի նկարագրությունը

Ծրագրի նպատակներն են բարելավել տարրական կրթություն ստացող երեխաների պատրաստվածությունը դպրոցին, բարելավել ֆիզիկական պայմանները եւ կրթական ռեսուրսների առկայությունը հանրակրթական դպրոցում եւ աջակցել Վարկառուի տարածքում բարձրագույն ուսումնական հաստատություններում որակի եւ համապատասխանության բարելավմանը:

Ծրագիրը կազմված է հետեւյալ մասերից.

Մաս Ա. Հանրակրթության որակի բարելավում

Հանրակրթության որակը բարելավելու գործում հետեւյալ աջակցության տրամադրում.

1. Դպրոցին պատրաստվածության եւ հավասար հնարավորությունների խթանում հանրակրթությանն անցնելիս՝ կենտրոնանալով բնակչության խոցելի խմբերի վրա՝ i) իրականացնելով՝ ա) իդենտիֆիկացմանն ուղղված ուսումնասիրության իրականացում անապահով բնակչության եւ այնպիսի հնարավոր կազմակերպությունների շրջանում, որոնք կարող են նախադպրոցական կրթական ծառայություններ մատուցել, եւ բ) կարիքների գնահատում՝ պարզելու համար՝ արդյոք համայնքները կարող են համաֆինանսավորել Միկրոծրագրերը, ii) համայնքների ղեկավարների, անդամների, ծնողների եւ հնարավոր ծառայություններ մատուցողների ներկայացուցիչների շրջանում իրականացնելով իրազեկման միջոցառումներ, այդ թվում՝ կլիմայի փոփոխությանն ադապտացվելու եւ ինժեներաշինարարական աշխատանքների հետ կապված մեղմացման միջոցառումների վերաբերյալ, iii) իրականացնելով համայնքահեն Նախադպրոցական միկրոծրագրերի գնահատում եւ ընտրություն, iv) Միկրոծրագրերի իրականացման համար Նախադպրոցական միկրոծրագրերի շահառուներին մրցակցային ենթադրամաշնորհների տրամադրում, v) Միկրոծրագրերի իրականացման համար տեխնիկական աջակցության տրամադրում, այդ թվում՝ էներգաարդյունավետ սարքավորումների եւ նյութերի ձեռքբերման համար, vi) իրականացնելով ուսուցիչների եւ տնօրենների վերապատրաստում վաղ մանկական կրթության, հիբրիդային եւ հեռավար ուսուցման, աղետների ռիսկի կառավարման եւ դպրոցների պահպանման վերաբերյալ, ինչպես նաեւ ձեռնարկների տրամադրում, եւ vii)

Միկրոծրագրերի ազդեցության մշտադիտարկում եւ գնահատում: Համայնքներին տրամադրվող Ենթադրամաշնորհները կօգնեն դասասենյակների եւ հարակից տարածքների վերանորոգման, սարքավորումների եւ կահույքի ձեռքբերման, մանկավարժական նյութերի տրամադրման եւ ուսուցիչների վերապատրաստման հարցերում:

2. Ավագ դպրոցների բարելավմանն ուղղված մի շարք միջոցառումների իրականացում, *ի թիվս այլնի՝* i) ընտրված ավագ դպրոցների տեխնիկատնտեսական հիմնավորման ուսումնասիրություն, նախագծում, հիմնանորոգում եւ վերազինում, ներառյալ՝ էներգախնայողության լուծումները, ii) դպրոցների սպասարկման համար ուսումնական մոդուլի եւ ձեռնարկների մշակում, iii) համատեքստային թվային ուսումնական նյութերի, տեղեկատվական եւ հաղորդակցական տեխնոլոգիաների սարքավորումների, այդ թվում՝ համակարգիչների եւ այլ էլեկտրոնային նյութերի տրամադրում, եւ iv) լաբորատոր սարքավորումների եւ կահույքի ձեռքբերում բոլոր ավագ դպրոցների համար:

3. Տվյալների հավաքագրման եւ կրթական համակարգի գործունեության մոնիթորինգի բարելավում՝ i) Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոնի (ԿՏԱԿ) տեղեկատվական հաղորդակցության տեխնոլոգիաների (ՏՀՏ) կրթական ռազմավարության մշակման միջոցով, ii) ԿՏԱԿ-ի կառույցների հիմնանորոգման եւ վերանորոգման միջոցով, iii) սարքավորումների եւ ծրագրային հարթակների ապահովման միջոցով, որոնք անհրաժեշտ են կրթության կառավարման տեղեկատվական համակարգերի (ԿԿՏՀ) եւ տվյալների վիզուալիզացման գործիքների գործարկման համար, iv) նույնականացման ուսումնասիրություն իրականացնելու միջոցով՝ ԿԿՏՀ-ին ավելացման ենթակա ֆունկցիոնալը որոշելու համար, v) ԿԿՏՀ-ին ավելացման ենթակա ֆունկցիոնալի մշակման, փորձարկման, մշտադիտարկման եւ գնահատման միջոցով, vi) Հայաստանի դպրոցներում սարքակազմի եւ ծրագրակազմի ապահովման տեխնիկական սպասարկման մեխանիզմների ստեղծման միջոցով, vii) տվյալների վիզուալիզացիայի գործիքների մասով ԿՏԱԿ-ի անձնակազմի վերապատրաստման միջոցով, viii) կառավարման, ուսուցման եւ ուսուցման գործընթացներում ՏՀՏ-ի ինտեգրման եւ տվյալների վիզուալիզացիայի գործիքների օգտագործման վերաբերյալ դպրոցների, համալսարանների եւ մասնագիտական կրթության եւ ուսուցման հաստատությունների ուսուցիչների եւ ոչ դասախոսական անձնակազմի վերապատրաստման միջոցով, ինչպես նաեւ դպրոցներում եւ կրթական հաստատություններում ԿԿՏՀ օգտագործողների վերապատրաստման միջոցով, եւ ix) Մաթեմատիկայի եւ բնագիտության միջազգային միտումների հետազոտությանը (ԹԻՄՍՍ) մասնակցության վճարների ֆինանսավորման միջոցով:

4. Աջակցություն կրթության որակի հետագա բարելավմանն ուսումնական ծրագրերի վերանայման միջոցով՝ 1-12-րդ դասարանների Ազգային ուսումնական ծրագիրը համապատասխանեցնելով Վարկառուի «Հանրակրթության մասին» օրենքի եւ Պետական հանրակրթական չափորոշչի պահանջներին, այդ թվում՝ i) տեխնիկական աջակցության տրամադրում՝ հանրակրթական առարկայական չափորոշիչների եւ ուսումնական պլանների վերանայման համար հայեցակարգային մոտեցումներ մշակելու համար, ii) տարբեր աշխատանքային խմբերի ստեղծում՝ ա) նախնական, հիմնական, ընդհանուր միջնակարգ եւ մասնագիտական կրթության առարկայական չափորոշիչների եւ ուսումնական պլանների վերանայման համար, եւ բ) կարճաժամկետ վերապատրաստման դասընթացների վերաբերյալ մոդուլի մշակում՝ ուսուցիչների իրազեկվածությունն ուսումնական պլանների եւ չափորոշիչների փոփոխությունների վերաբերյալ բարձրացնելու նպատակով, iii) անհրաժեշտության դեպքում նախնական, հիմնական, ընդհանուր միջնակարգ եւ մասնագիտական կրթության առարկայական չափորոշիչների եւ ուսումնական պլանների վերանայում եւ կատարելագործում, եւ iv) դասագրքերի հեղինակների վերապատրաստման դասընթացներ:

5. Հանրակրթական դպրոցները պատշաճ կերպով համալրելուն ուղղված միջոցառումների համալիր իրականացում, ներառյալ, ի թիվս այլնի՝ i) ուսումնասիրության իրականացում, այդ թվում՝ մասնակից դպրոցների ընտրության չափորոշիչների սահմանում, ii) անհրաժեշտության դեպքում դպրոցների հիմնական ենթակառուցվածքային կարիքների գնահատում եւ մինչեւ սարքավորումների եւ կահույքի տեղադրումը համապատասխան մեխանիզմների ներդրում՝ հիմնական ենթակառուցվածքի առկայությունն ապահովելու նպատակով, iii) էներգաարդյունավետ ՏՀՏ եւ գիտական լաբորատոր սարքավորումների եւ կահույքի ձեռքբերում եւ դրանց օգտագործման մշտադիտարկման համակարգի ներդրում, եւ iv) գիտական լաբորատոր սարքավորումների օգտագործման, ինչպես նաեւ գենդերային զգայուն դասավանդման մեթոդների եւ պրակտիկայի վերաբերյալ ուսուցիչների եւ դպրոցների տնօրենների համար վերապատրաստման մոդուլների մշակում եւ իրականացում՝ իգական սեռի աշակերտների ներգրավվածությունը բնագիտական (ՍՏԵՄ) առարկաներում բարելավելու նպատակով:

Մաս Բ. Բարձրագույն ուսումնական հաստատությունների (ԲՈՒՀ) նորարարությունների մրցակցային հիմնադրամի (ՆՄՀ) լիամասշտաբ գործարկում

Աջակցություն բարձրագույն ուսումնական հաստատությունների (ԲՈՒՀ) նորարարությունների մրցակցային հիմնադրամի ծրագրի ինստիտուցիոնալացմանն ու ներդրմանը, *ի թիվս այլնի*, հետեւյալի միջոցով. i) ՆՄՀ գործառնական գործընթացների եւ ընթացակարգերի թարմացում, ii) ՆՄՀ ենթածրագրերի գնահատում ու ընտրություն եւ ՆՄՀ ենթածրագրերի շահառուներին ՆՄՀ ենթադրամաշնորհների տրամադրում՝ ՆՄՀ ենթածրագրերի իրականացման համար, iii) հիմնադրամի իրականացման գործընթացի մշտադիտարկում, այդ թվում՝ դրամաշնորհառուների եւ հնարավոր դիմորդների եւ մասնավոր հատվածի գործընկերների մասով ուսումնասիրություններ, iv) մասնավոր հատվածի եւ հնարավոր միջազգային դոնորների օգտագործում՝ հիմնադրամի կայունությունը խթանելու համար, եւ v) ԲՈՒՀ-երի ղեկավար եւ այլ համապատասխան անձնակազմի կարողությունների բարելավում՝ ծրագրերի կառավարման հմտությունների, գնումների, ծրագրերի մշտադիտարկման եւ գնահատման հարցերի վերաբերյալ:

Մաս Գ. Ծրագրի կառավարում, մշտադիտարկում եւ գնահատում

Կրթական ծրագրի կենտրոնին (ԿԾԿ)՝ որպես ԿԳՄՍՆ-ի ներքո գործող՝ իրականացնող ստորաբաժանման արդյունավետ գործունեության համար ֆինանսավորման եւ աջակցության տրամադրում, այդ թվում՝ անհրաժեշտ հիմնական անձնակազմին աշխատանքի ընդունում, մշտադիտարկման եւ գնահատման ուսումնասիրություններ եւ աուդիտ, Նախադպրոցական միկրոծրագրերի եւ ՆՄՀ ենթածրագրերի գնահատումներ եւ իրականացման գնահատում, Ծրագրի համակարգում, սեմինարներ եւ աշխատաժողովներ, ֆինանսական կառավարում, հաղորդակցության վերաբերյալ իրազեկման քայլեր, գնումներ, բնապահպանական եւ սոցիալական երաշխիքների կիրառում, տեխնիկական աջակցություն եւ համապատասխան անձնակազմի վերապատրաստում գնումների, հատկացումների ոլորտներում, տեղեկատվական տեխնոլոգիաներ, ծրագրերի կառավարում եւ այլն:

ԱՌԴԻՐ 2

Ծրագրի իրականացում

Բաժին I. <u>Իրականացման մեխանիզմներ</u>

Ա. Ինստիտուցիոնալ մեխանիզմները

Ծրագրի իրականացումն ապահովելու համար Վարկառուն, ի դեմս ԿԳՄՄՆ-ի, Ծրագրի իրականացման ընթացքում միշտ պետք է ունենա ստորաբաժանում (Ծրագրի իրականացման գրասենյակ) այնպիսի լիազորություններով, կառուցվածքով, անձնակազմով, գործառույթներով, պարտականություններով եւ համապատասխան ռեսուրսներով, ինչպես սահմանված է Ծրագրի գործառնական ձեռնարկում, եւ այս բոլորը Բանկի համար պետք է լինի ընդունելի:

Բ. Ծրագրի գործառնական ձեռնարկը

1. Ծրագրի պատշաճ իրականացումն ապահովելու համար Վարկառուն, Բանկի համար ընդունելի ձեւով եւ բովանդակությամբ,ԿԳՄՄՆ-ի միջոցով պետք է պատրաստի եւ ընդունի ձեռնարկ (Ծրագրի գործառնական ձեռնարկ), որը պետք է ներառի՝

ա) Ծրագրի վարչական, ֆինանսական կառավարման, գնումների, հաշվապահական հաշվառման, ինչպես նաեւ մշտադիտարկման եւ գնահատման ընթացակարգերն ու պայմանավորվածությունները,

բ) Ծրագրի կատարողականի ցուցանիշները,

գ) Ծրագրի իրականացման գրասենյակի անձնակազմի դերերն ու պարտականությունները,

դ) Ծրագրի մանրամասն նկարագրությունը,

ե) Ծրագրի իրականացման մեխանիզմները եւ մեթոդաբանությունը, եւ

զ) Նախադպրոցական միկրոծրագրերի եւ ՆՄՀ ենթածրագրերի ընտրության եւ դրանց համապատասխան ֆինանսավորման պահանջները,

չափանիշները եւ որոշումների ընդունման գործընթացը:

2. Վարկառուն, ի դեմս ԿԳՄՄՆ-ի, պետք է կիրականացնի Ծրագիրը սույն Համաձայնագրին եւ Ծրագրի գործառնական ձեռնարկին համապատասխան: Բացառությամբ այն դեպքերի, երբ Բանկն այլ բան նախատեսի, Վարկառուն չի կարող պատվիրակել, փոփոխել, չեղյալ հայտարարել կամ հրաժարվել Ծրագրի գործառնական ձեռնարկի դրույթներից՝ առանց Բանկի նախնական հաստատման: Ծրագրի գործառնական ձեռնարկի եւ սույն Համաձայնագրի դրույթների միջեւ որեւէ հակասության դեպքում գերակայում են սույն Համաձայնագրի դրույթները:

Գ. Նախադպրոցական միկրոծրագրերը եւ ՆՄՀ ենթածրագրերը

1. Վարկառուն, ի դեմս ԿԳՄՄՆ-ի, Ենթադրամաշնորհներ է տրամադրում Շահառուներին՝ Միկրոծրագրեր կամ Ենթածրագրեր ֆինանսավորելու համար՝ Բանկի համար ընդունելի համապատասխանության չափանիշների եւ ընթացակարգերի համաձայն, որոնք ավելի մանրամասն ներկայացվում են Ծրագրի գործառնական ձեռնարկում, որը պետք է ներառի հետեւյալը.

ա) առաջարկվող Միկրոծրագիրը կամ Ենթածրագիրը տնտեսապես, ֆինանսապես եւ տեխնիկապես իրագործելի է, էկոլոգիապես անվտանգ եւ իրավասու Շահառուների կողմից պետք է իրականացվի Վարկառուի կողմից ընտրված տարածքներում.

բ) առաջարկվող Միկրոծրագիրը կամ Ենթածրագիրը ներառում է Ծրագրի համապատասխանաբար Ա.1(iv) Մասով կամ Բ Մասով սահմանված կառուցապատման հատուկ գործողություններից, եւ որը ավելի մանրամասն ներկայացվում է Ծրագրի գործառնական ձեռնարկում եւ համապատասխանում է Վարկառուի բոլոր կիրառելի օրենքներին ու կարգավորումներին.

գ) առաջարկվող Միկրոծրագիրը կամ Ենթածրագիրը բավարարում է Ծրագրի գործառնական ձեռնարկում նշված երաշխիքների համապատասխանության չափանիշները եւ համապատասխանում է երաշխիքների շրջանակների եւ պահանջվող այլ երաշխիքային փաստաթղթերի դրույթներին. եւ

դ) եթե, Ծրագրի գործառնական ձեռնարկի համաձայն, Միկրոծրագրի կամ Ենթածրագրի համար իրականացված բնապահպանական սքրնինգի հիման վրա պահանջվի ԲՍԿՊ, ապա այդպիսի ԲՍԿՊ պետք է պատրաստվի ԲՍԿՇ-ի համաձայն եւ հաստատվի Բանկի կողմից:

2. Վարկառուն, ի դեմս ԿԳՄՄՆ-ի, յուրաքանչյուր Ենթադրամաշնորհ

տրամադրում է համապատասխան Շահառուի հետ կնքված Ենթադրամաշնորհի մասին համաձայնագրի շրջանակներում Բանկի կողմից հաստատված եւ Ծրագրի գործառնական ձեռնարկում նկարագրված պայմանների համաձայն, որոնք պետք է ներառեն հետեւյալը.

ա) Ենթադրամաշնորհը պետք է համապատասխանի դրամաշնորհի համար նախատեսված պայմաններին.

բ) Վարկառուն, ի դեմս ԿԳՄՍՆ-ի, կստանա համապատասխան իրավունքներ՝ պաշտպանելու իր եւ Բանկի շահերը, այդ թվում՝ i) Ենթադրամաշնորհային միջոցներն օգտագործելու հետ կապված իրավունքը կասեցնելու կամ դադարեցնելու Շահառուի իրավունքը, կամ ամբողջությամբ կամ մասամբ փոխհատուցում ստանալու Ենթադրամաշնորհի նախկինում առհանված գումարի դիմաց, եթե Շահառուն չի կատարում Ենթադրամաշնորհային համաձայնագրով նախատեսված իր պարտավորություններից որեւէ մեկը.

գ) Վարկառուն, ի դեմս ԿԳՄՍՆ-ի, պետք է յուրաքանչյուր Շահառուից պահանջի՝

(i) իր Միկրոնախագիծը կամ Ենթածրագիրն իրականացնել պատշաճ ջանասիրությամբ եւ արդյունավետորեն եւ Բանկին բավարարող տեխնիկական, տնտեսական, ֆինանսական, կառավարչական, բնապահպանական եւ սոցիալական չափանիշներին եւ գործելակերպին համապատասխան, այդ թվում՝ Հակակոռուպցիոն ուղեցույցի դրույթների համաձայն, որոնք կիրառելի են Վարկառուից բացի վարկային միջոցների այլ ստացողների համար,

(ii) անհրաժեշտության դեպքում անհապաղ տրամադրել այդ նպատակով պահանջվող ռեսուրսները,

(iii) գնել այն ապրանքները, աշխատանքներն ու ծառայությունները, որոնք պետք է Ենթադրամաշնորհի հաշվին ֆինանսավորել՝ սույն Համաձայնագրի դրույթներին համապատասխան,

(iv) վարել համապատասխան քաղաքականություններ եւ ընթացակարգեր, որոնք հնարավորություն են տալիս վերահսկելու եւ գնահատելու Միկրոծրագրի կամ Ենթածրագրի առաջընթացը եւ դրանով հետապնդվող նպատակների իրականացումը Բանկի համար ընդունելի ցուցանիշների համաձայն,

(v) 1) վարել ֆինանսական կառավարման համակարգ եւ

պատրաստել ֆինանսական հաշվետվություններ՝ Բանկի համար ընդունելի հաշվապահական հաշվառման կիրառվող ստանդարտների համաձայն, այնպես, ինչպես պահանջվում է Միկրոծրագրի կամ Ենթածրագրի հետ կապված գործառնությունները, ռեսուրսները եւ ծախսերն արտացոլելու համար. եւ 2) Բանկի կամ Վարկառուի խնդրանքով այդ ֆինանսական հաշվետվությունները աուդիտի ենթարկել Բանկի համար ընդունելի անկախ աուդիտորների կողմից՝ Բանկի համար ընդունելի աուդիտի ստանդարտների համաձայն, եւ Վարկառուին եւ Բանկին պատշաճ կերպով ներկայացնել աուդիտի ենթարկված հաշվետվությունները,

(vi) Վարկառուին եւ Բանկին հնարավորություն ընձեռել ստուգելու Միկրոծրագիրը կամ Ենթածրագիրը, դրա գործունեությունը եւ որեւէ վերաբերելի գրառում եւ փաստաթուղթ, եւ

(vii) պատրաստել եւ Վարկառուին եւ Բանկին տրամադրել բոլոր այն տեղեկությունները, որոնք Վարկառուն կամ Բանկը խելամտորեն կպահանջի վերոնշյալի հետ կապված:

3. Վարկառուն, ի դեմս ԿԳՄՄՆ-ի, պետք է իրացնի յուրաքանչյուր Ենթադրամաշնորհային Համաձայնագրով նախատեսված իր իրավունքներն այնպես, որպեսզի պաշտպանի Վարկառուի եւ Բանկի շահերը եւ իրագործի Վարկի նպատակները: Բացառությամբ այն դեպքերի, երբ Բանկն այլ կերպ կհամաձայնի, Վարկառուն, ի դեմս ԿԳՄՄՆ-ի, չպետք է պատվիրակի, փոփոխի, չեղյալ հայտարարի որեւէ Ենթադրամաշնորհային համաձայնագիր կամ դրա որեւէ դրույթ կամ հրաժարվի դրանից:

4. Վարկառուն, ի դեմս ԿԳՄՄՆ-ի, պետք է գնահատի, վերանայի, հաստատի եւ մշտադիտարկման ենթարկի Նախադպրոցական միկրոծրագրերը եւ ՆՄՀ ենթածրագրերը՝ Ծրագրի գործառնական ձեռնարկի եւ սույն Համաձայնագրի համաձայն:

Դ. Երաշխիքները

1. Վարկառուն, ի դեմս ԿԳՄՄՆ-ի, պետք է ապահովի՝

ա) Ծրագրի իրականացումը հավուր պատշաճի՝ հաշվի առնելով առողջության, անվտանգության, սոցիալական եւ բնապահպանական համապատասխան գործելակերպերն ու չափանիշները, եւ համաձայն Երաշխիքային գործիքների.

բ) Ծրագրի շրջանակներում յուրաքանչյուր միջոցառման համար, որի

համար ԲՍԿՇ-ով նախատեսվում է ԲՍԿՊ-ի մշակում՝

(i) պատշաճ ԲՍԿՊ ունենալու նպատակով աշխատանքների կատարում, Ա) որը մշակվել եւ հրապարակվել է ԲՍԿՇ-ի համաձայն, Բ) որի հետ կապված պատշաճ կերպով խորհրդակցություն է կազմակերպվել Ծրագրի ազդակիր անձանց հետ՝ ԲՍԿՇ-ի համաձայն, եւ ներկայացվել Բանկին՝ ուսումնասիրման եւ հաստատման, եւ Գ) որն այնուհետեւ ընդունվել է նախքան գործողության իրականացումը, եւ

(ii) այնպիսի միջոցների ձեռնարկումը, որոնք անհրաժեշտ են կամ տեղին են նման ԲՍԿՊ-ի պահանջներին համապատասխանությունն ապահովելու համար՝ Բանկի կողմից որպես բավարար դիտարկվող ձեւով:

2. Եթե Բանկի կողմից այլ բան գրավոր համաձայնեցված չէ, Վարկառուն, ի դեմս ԿԳՄՄՆ-ի, պետք է ձեռնարկի համապատասխան միջոցներ՝ թույլ չտալու համար Երաշխիքային գործիքների դրույթներից որեւէ մեկի չեղյալ հայտարարումը, փոփոխումը, ուժը կորցրած ճանաչելը, կասեցումը կամ դրանից հրաժարումը: Երաշխիքային գործիքներից որեւէ մեկի դրույթների եւ սույն Համաձայնագրի դրույթների միջեւ որեւէ անհամապատասխանության դեպքում գերակայում են սույն Համաձայնագրի դրույթները:

3. Վարկառուն, ի դեմս ԿԳՄՄՆ-ի, պետք է ապահովի, որ՝

ա) Ծրագրի շրջանակներում տեխնիկական աջակցության, նախագծման եւ կարողությունների զարգացման հետ կապված բոլոր խորհրդատվությունները, որոնց արդյունքների կիրառումը կարող է ունենալ բնապահպանական, սոցիալական եւ առողջապահական եւ անվտանգային հետեւանքներ, իրականացվեն միայն Բանկի կողմից վերանայված եւ բավարար ճանաչված տեխնիկական առաջադրանքների համաձայն, եւ

բ) նման տեխնիկական առաջադրանքով նախատեսվի, որ տեխնիկական աջակցության, նախագծման եւ կարողությունների զարգացման գործողությունները հաշվի առնեն Բանկի անվտանգության քաղաքականության եւ ԲԱԱ ուղեցույցների պահանջները:

4. Առանց սահմանափակվելու սույն Համաձայնագրի շրջանակներում հաշվետվողականության այլ պարտավորություններով՝ Վարկառուն, ի դեմս ԿԳՄՄՆ-ի, պետք է՝

ա) իր կողմից անհրաժեշտ բոլոր միջոցները ձեռնարկի՝ Երաշխիքային գործիքներին համապատասխանության վերաբերյալ տեղեկատվությունը կանոնավոր կերպով հավաքագրելու, կազմելու եւ Ծրագրի հաշվետվությունների

շրջանակներում Բանկ ներկայացնելու համար, իսկ Բանկի կողմից պահանջվելու դեպքում՝ առանձին հաշվետվության շրջանակներում այդպիսի բոլոր հաշվետվությունները Բանկի համար ընդունելի ձեւով եւ բովանդակությամբ անհապաղ ներկայացնելու համար, որոնք, ի թիվս այլնի, սահմանում են՝

i) Երաշխիքային գործիքների իրականացման կարգավիճակը,

ii) պայմանները, եթե այդպիսիք կան, որոնք խոչընդոտում են կամ սպառնում են խոչընդոտել Երաշխիքային գործիքների իրականացումը, եւ

iii) ուղղիչ եւ կանխարգելիչ միջոցառումները, որոնք ձեռնարկվել են կամ պետք է ձեռնարկվեն այդպիսի պայմանները բավարարելու համար:

բ) անհապաղ Բանկին տրամադրի առաջընթացի վերաբերյալ ամսական յուրաքանչյուր հաշվետվության պատճենը, որը պատրաստվել եւ ներկայացվել է Ծրագրի ինժեներաշինարարական աշխատանքները վերահսկող ցանկացած կազմակերպության (ներառյալ՝ ցանկացած ինժեների), Ծրագրի կապալառուների եւ/կամ ենթակապալառուների կողմից, եւ

գ) անհապաղ տեղեկացնի Բանկին Ծրագրի հետ կապված կամ դրա վրա ազդեցություն ունեցող ցանկացած միջադեպի կամ պատահարի մասին, որն ունի կամ կարող է զգալի բացասական ազդեցություն ունենալ շրջակա միջավայրի, ազդակիր համայնքների, հանրության կամ աշխատողների վրա:

Վարկառուն, ի դեմս ԿԳՄՄՆ-ի, Ծրագրի իրականացման ողջ ընթացքում Բանկին բավարարող ձեւով եւ բովանդակությամբ պետք է ունենա եւ հրապարակի բողոքարկման մեխանիզմներ, որոնք հնարավորություն կտան ուսումնասիրելու եւ արդարացիորեն եւ բարեխղճորեն լուծելու Ծրագրի հետ կապված բոլոր բողոքները, եւ ձեռնարկի անհրաժեշտ բոլոր միջոցները՝ այդ ընթացակարգի կիրառման արդյունքում կայացրած որոշումները Բանկի կողմից բավարար դիտարկվող ձեւով իրագործելու համար:

Ե. Օժանդակ պայմանագիրը

1. Ծրագրի Ա.3 (v) Մասի իրականացմանն աջակցելու նպատակով Վարկառուն, ԿԳՄՄՆ միջոցով, վարկային միջոցների մի մասը պետք է տրամադրի ԿՏԱԿ-ին՝ Վարկառուի եւ ԿՏԱԿ-ի միջեւ կնքված Օժանդակ պայմանագրի շրջանակներում, Բանկի կողմից հաստատված պայմաններով (Օժանդակ պայմանագիր):

2. Վարկառուն, ԿԳՄՄՆ միջոցով, Օժանդակ պայմանագրի շրջանակներում

իր իրավունքները պետք է այնպես իրացնի, որպեսզի պաշտպանի Վարկառուի եւ Բանկի շահերը եւ ապահովի Վարկի նպատակների իրականացումը: Բացառությամբ այն դեպքերի, երբ Բանկի հետ այլ համաձայնություն է ձեռք բերվել, Վարկառուն, ԿԳՄՍՆ միջոցով, չպետք է պատվիրակի, փոփոխի, չեղյալ հայտարարի Օժանդակ պայմանագիրը կամ դրա դրույթներից որեւէ մեկը կամ հրաժարվի դրանից:

Բաժին II. Ծրագրի մոնիթորինգ, հաշվետվությունների ներկայացում եւ գնահատում

Վարկառուն Ծրագրի յուրաքանչյուր Հաշվետվություն, որն ընդգրկում է օրացուցային կիսամյակը, Բանկ է ներկայացնում յուրաքանչյուր օրացուցային կիսամյակի ավարտից հետո ոչ ուշ, քան մեկ ամսվա ընթացքում:

Բաժին III. Վարկային միջոցների առհանում

Ա. Ընդհանուր

Առանց Ընդհանուր պայմանների II Հոդվածի դրույթների սահմանափակման եւ Վարկային միջոցների տրամադրման եւ ֆինանսական տեղեկատվության մասին գրության համաձայն՝ Վարկառուն կարող է Վարկի միջոցներն առհանել՝ ա) Թույլատրելի ծախսերի ֆինանսավորման, եւ բ) վճարելու համար Սկզբնավճարի հատկացված գումարի չափով, եւ, եթե կիրառելի է, մինչեւ հետեւյալ աղյուսակում յուրաքանչյուր Կատեգորիայի համար սահմանված տոկոսի չափով.

Կատեգորիա	Հատկացված վարկի գումար (արտահայտված եվրոյով)	Ֆինանսավորման ենթակա ծախսերի տոկոսը (ներառյալ հարկերը)
1) Ապրանքներ, աշխատանքներ, ոչ խորհրդատվական ծառայություններ, խորհրդատվական ծառայություններ, վերապատրաստում եւ Ծրագրի գործառնական ծախսեր	20,283,500	80%
2) Ենթադրամաշնորհներ	2,260,000	80%
3) Սկզբնավճար	56,500	Սույն Համաձայնագրի 2.03 Բաժնի համաձայն վճարման ենթակա գումար՝ ըստ Ընդհանուր պայմանների 2.07«բ» Բաժնի
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՈՒՄԱՐ	22,600,000	

Բ. Առհանման պայմաններ, առհանման շրջան

1. Չնայած վերոշարադրյալ Մաս Ա-ի՝ առհանում չի կատարվի՝

ա) մինչեւ Ստորագրման ամսաթիվը կատարված վճարումների համար՝ բացառությամբ այն դեպքերի, երբ նախքան այդ ամսաթիվը կարող են կատարվել առհանումներ, որոնց ընդհանուր գումարը չի գերազանցում €450,000 եվրոն, սակայն դրանք պետք է արվեն 2022թ-ի մայիսի 1-ին կամ դրանից հետո կատարված 1-ին Կատեգորիայի ներքո Թույլատրելի ծախսերի մասով:

գ) Ավարտի ամսաթիվն է 2025 թվականի դեկտեմբերի 31-ն է:

ԱՌԴԻՐ 3

Հանձնառության հետ կապված մարման ժամանակացույց

Հետեւյալ աղյուսակում սահմանվում են Վարկի մայր գումարի մարման ամսաթվերը եւ Մայր գումարի վճարման յուրաքանչյուր ամսաթվին վճարման ենթակա Վարկի ընդհանուր մայր գումարի տոկոսը (Մասնաբաժիններով մարում):

Մայր գումարի հավասարաչափ մարում

Մայր գումարի վճարման ամսաթիվ	Մասնաբաժիններով մարում
Յուրաքանչյուր փետրվարի 15-ին եւ օգոստոսի 15-ին սկսած 2037թ. փետրվարի 15-ից մինչեւ 2046թ. օգոստոսի 15-ը	4.76%
2047թ. փետրվարի 15-ին	4.8%

ՀԱՎԵԼՎԱԾ

Սահմանումներ

1. **Հակակոռուպցիոն ուղեցույց** Ընդհանուր պայմանների Հավելվածի 6-րդ կետի նպատակով նշանակում է 2006 թվականի հոկտեմբերի 15-ով թվագրված եւ 2011 թվականի հունվարին ու 2016 թվականի հուլիսի 1-ի դրությամբ լրամշակված՝ «ՎԶՄԲ վարկային միջոցներով եւ ՄԶԸ փոխառություններով եւ դրամաշնորհներով ֆինանսավորվող ծրագրերում խարդախության եւ կոռուպցիայի կանխարգելման ուղեցույց»-ը:

2. **Կատեգորիա** նշանակում է սույն Համաձայնագրի 2-րդ Առդիրի III.Ա Բաժնի աղյուսակում սահմանվող կատեգորիան:

3. **Շահառու** նշանակում է համայնքահեն Նախադպրոցական միկրոծրագրերի շահառուն կամ ՆՄՀ ենթածրագրի շահառուն, իսկ **Շահառուներ** նշանակում է մեկից ավելի համայնքահեն Նախադպրոցական միկրոծրագրի շահառուն եւ/կամ ՆՄՀ ենթածրագրի շահառուն:

4. **ՆՄՀ** նշանակում է Նորարարությունների մրցակցային հիմնադրամ, հիմնադրամ, որը ստեղծվել է Վարկառուի՝ 2011 թվականի դեկտեմբերի 1-ի թիվ 47-43 որոշման համաձայն, որը շահագործվում եւ կառավարվում է ԿԳՄՍՆ-ի կողմից, որի նպատակն է խթանել նորարարությունը, ռազմավարական ծրագրեր մշակել բարձրագույն կրթության ոլորտում եւ բարձրացնել բարձրագույն ուսումնական հաստատությունների որակը:

5. **ՆՄՀ ենթադրամաշնորհներ** նշանակում է դրամաշնորհ՝ ապրանքների, աշխատանքների, ծառայությունների, ուսուցման եւ հավելյալ գործառնական ծախսերը ֆինանսավորելու համար, որոնք պահանջվում են ՆՄՀ ենթածրագրով, եւ որոնք պետք է իրականացվեն ՆՄՀ շահառուի կողմից Ծրագրի Բ մասի շրջանակներում:]

6. **ՆՄՀ ենթածրագիր** կամ **ենթածրագիր** նշանակում է զարգացման հատուկ ծրագիր, որը պետք է իրականացվի ՆՄՀ ենթածրագրի շահառուի կողմից՝ Ծրագրի Բ մասի շրջանակներում:

7. **ՆՄՀ ենթածրագրի շահառու** նշանակում է ընտրված բարձրագույն ուսումնական հաստատություն (ԲՈՒՀ), որը Ենթադրամաշնորհներ է ստանում Ծրագրի Բ Մասի շրջանակներում ՆՄՀ ենթածրագրերի ֆինանսավորման համար,

որոնք ընտրվել են Գործառնական ձեռնարկում սահմանված համապատասխանության չափանիշների եւ ընթացակարգերի համաձայն:

8. **Ընդհանուր պայմաններ** նշանակում է ՎԶՄԲ ֆինանսավորման, ներդրումային ծրագրերի ֆինանսավորման համար Վերակառուցման եւ զարգացման միջազգային բանկի ընդհանուր պայմանները՝ թվագրված 2018 թվականի դեկտեմբերի 14-ով (լրամշակված 2020 թվականի օգոստոսի 1-ին, 2020 թվականի դեկտեմբերի 21-ին, 2021 թվականի ապրիլի 1-ին եւ 2022 թվականի հունվարի 1-ին):

9. **ԲԱԱ ուղեցույցներ** նշանակում է Համաշխարհային բանկի խմբի Բնապահպանական, առողջության եւ անվտանգության ուղեցույցները, որոնք հրապարակվել են www.ifc.org/ehsguidelines կայքում՝ նշված ուղեցույցներում ժամանակ առ ժամանակ կատարվող փոփոխություններով:

10. **ԲՍԿԾ** կամ **Բնապահպանական եւ սոցիալական կառավարման շրջանակ** նշանակում է բնապահպանական եւ սոցիալական կառավարման շրջանակը՝ թվագրված 2013 թվականի դեկտեմբերի 2-ով եւ փոփոխված 2022 թվականի մարտի 3-ին, որը պատրաստվել եւ ընդունվել է Վարկառուի կողմից՝ Բանկի համար բավարար դիտարկվող ձեւով, եւ որը հրապարակվել է երկրում, ինչպես նաեւ Բանկի արտաքին կայքում. դրանում սահմանվում են սկզբունքները, կանոնները, ուղեցույցները եւ ընթացակարգերը, Ծրագրի գործունեության հնարավոր անբարենպաստ բնապահպանական եւ սոցիալական ռիսկերն ու ազդեցությունները (ներառյալ՝ առողջության եւ անվտանգության խնդիրները) զննելու եւ գնահատելու համար, ներառյալ՝ գենդերային բռնության եւ սեռական շահագործման եւ չարաշահման ռիսկերը, միջոցներ են ձեռնարկվում շրջակա միջավայրի եւ սոցիալական անբարենպաստ ռիսկերից եւ ազդեցություններից խուսափելու, դրանք նվազեցնելու, մեղմելու կամ փոխհատուցելու համար, այդ թվում՝ միջոցառումներ, որոնք ձգտում են կանխել եւ արձագանքել գենդերային բռնությանը եւ սեռական շահագործմանն ու չարաշահմանը, այդ միջոցառումներն իրականացնելու համար անհրաժեշտ ընթացակարգային, բյուջետային եւ ինստիտուցիոնալ համաձայնություններ եւ գործողություններ, ինչպես նաեւ տեղեկատվություն այն գործակալության կամ գործակալությունների մասին, որոնք պատասխանատու են Ծրագրերի ռիսկերի եւ ազդեցությունների վերացման համար, ինչպես նաեւ բնապահպանական եւ սոցիալական կառավարման պլանների պատրաստման համար՝ դրանցում Վարկառուի կողմից ժամանակ առ ժամանակ արվող փոփոխություններով՝ Բանկի նախնական գրավոր համաձայնությամբ:

11. **ԲՍԿՊ** կամ **Բնապահպանական եւ սոցիալական կառավարման պլան** նշանակում է Վարկառուի կողմից մշակված բնապահպանական եւ սոցիալական

կառավարման պլանը, որը բավարարում է Բանկին եւ հրապարակված է Բանկի արտաքին կայքում, որը մանրամասնում է. ա) միջոցառումները, որոնք պետք է ձեռնարկվեն ծրագրի իրականացման ընթացքում՝ բնապահպանական եւ սոցիալական բացասական ազդեցություններից (ներառյալ՝ առողջության եւ անվտանգության խնդիրները) խուսափելու, դրանք նվազագույնի հասցնելու, մեղմելու կամ փոխհատուցելու կամ դրանք ընդունելի մակարդակի իջեցնելու համար, բ) միջոցները, որոնց օգնությամբ փորձ է արվում կանխելու եւ արձագանքելու գենդերային հիմքով բռնությանը եւ սեռական շահագործմանն ու չարաշահմանը, գ) ընթացակարգային, բյուջետային եւ ինստիտուցիոնալ միջոցառումներն ու գործողությունները, որոնք անհրաժեշտ են այդ միջոցառումների իրականացման համար, ներառյալ՝ այդ պլանի ցանկացած ժամանակացույց, եւ որպես այդպիսին, Վարկառուի կողմից պլանը կարող է ժամանակ առ ժամանակ փոփոխվել Բանկի նախնական գրավոր համաձայնությամբ:

12. **ԿԳՄՍՆ** նշանակում է Վարկառուի Կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարությունը կամ դրա ցանկացած իրավահաջորդ կառույց, որն ընդունելի է Բանկի համար:

13. **ԿՏԱԿ** կամ **Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոն** նշանակում է Վարկառուի պետական, ոչ առեւտրային կազմակերպությունը, որը հիմնադրվել է ԿՏԱԿ-ի վերաբերյալ օրենսդրությանը համապատասխան, եւ դրա ցանկացած իրավահաջորդ կազմակերպություն, որն ընդունելի է Բանկի համար:

14. **ԿՏԱԿ-ի վերաբերյալ օրենսդրություն** նշանակում է Վարկառուի՝ 2004 թվականի մարտի 11-ի թիվ 408-ն որոշումը, որով հաստատվում է ԿՏԱԿ-ի հիմնադրումը:

15. **Գործառնական ծախսեր** նշանակում է Վարկառուի կամ ԾԻԳ-ի կողմից Ծրագրի իրականացման, կառավարման, մշտադիտարկման, այդ թվում՝ կոմունալ ծախսերը, մատակարարումները, պահպանման ծախսերը, հայտարարության ծախսերը, ԾԻԳ-ի աշխատակիցների ճամփորդության ծախսերը եւ օրապահիկը, ԹԻՄՍՍ-ին մասնակցության վճարները, աշխատավարձերը եւ օժանդակ աշխատակազմի համար կանոնադրությամբ նախատեսված վճարները, սակայն չի ներառում Վարկառուի պաշտոնատար անձանց կամ քաղծառայողների աշխատավարձերը, ինչպես նաեւ այս պաշտոնյաների եւ աշխատակիցների կողմից որեւէ սոցիալական հիմնադրամ արվող այլ վճարում:

16. **Սկզբնական ծրագիր** նշանակում է Սկզբնական վարկային համաձայնագրում եւ ֆինանսավորման համաձայնագրում նկարագրվող Ծրագիրը:

17. **Սկզբնական վարկային համաձայնագիր եւ ֆինանսական համաձայնագիր** նշանակում է «Կրթության բարելավման ծրագրի» նպատակով

Վարկառուի եւ Բանկի միջեւ 2014 թվականի մայիսի 23-ի համաձայնագրերը (համապատասխանաբար՝ Վարկ 8342-AM եւ Փոխառություն 5837-AM): Սկզբնական վարկային համաձայնագիրը եւ ֆինանսավորման համաձայնագիրը ներառում են բոլոր հավելվածները, առդիրները եւ համաձայնագրերը, որոնք լրացնում են Սկզբնական վարկային համաձայնագիրը եւ ֆինանսավորման համաձայնագիրը:

18. **ԾԻԳ** կամ **Ծրագրի իրականացման գրասենյակ** նշանակում է սույն Համաձայնագրի 2-րդ Առդիրի Ի.Ա Բաժնում նշված գրասենյակը:

19. **Նախադպրոցական միկրոծրագիր** կամ **Միկրոծրագիր** նշանակում է զարգացման հատուկ ծրագիր, որն իրականացվելու է Միկրոծրագրի համայնքահեն շահառուի կողմից՝ Ծրագրի Ա.1 (iv) Մասի համաձայն:

20. **Նախադպրոցական միկրոծրագրի շահառու** նշանակում է ընտրված համայնքահեն խումբ կամ կազմակերպություն, որը Ենթադրամաշնորհներ է ստանում՝ Ծրագրի Ա.1 (iv) Մասով նախատեսված Նախադպրոցական միկրոծրագրերը ֆինանսավորելու համար՝ ընտրված Ծրագրի Գործառնական ձեռնարկում սահմանված համապատասխանության չափանիշների ու ընթացակարգերի համաձայն:

21. **Նախադպրոցական միկրոծրագրի ենթադրամաշնորհ** նշանակում է համայնքահեն Միկրոծրագրի շրջանակներում ապրանքների, աշխատանքների, ծառայությունների, ուսուցման եւ գործառնական ծախսերի ֆինանսավորման նպատակով ստացված դրամաշնորհ, որը պետք է իրականացվի համայնքահեն Միկրոծրագրի շահառուի կողմից Ծրագրի Ա.1 (iv) Մասի համաձայն:

22. **Ծրագրի գործառնական ձեռնարկ** նշանակում է ձեռնարկ, որը նշված է սույն Համաձայնագրի 2-րդ Առդիրի Ի.Բ Բաժնում:

23. **Գնումների կանոնակարգ** նշանակում է Ընդհանուր պայմանների Հավելվածի 84-րդ կետի նպատակով «Համաշխարհային բանկի Գնումների կանոնակարգը IPF փոխառուների համար»՝ թվագրված 2020 թվականի նոյեմբերով:

24. **Երաշխիքային գործիքներ** նշանակում է ԲՍԿԾ-ն եւ ԲՍԿՊ-ն միասին վերցված, եւ **Երաշխիքային գործիք** նշանակում է այդպիսի Երաշխիքային գործիքներից որեւէ մեկը:

25. **Երաշխիքների քաղաքականություն** նշանակում է Բանկի Գործառնական քաղաքականությունները (ԳՔ-ներ) եւ Բանկի ընթացակարգերը (ԲԸ), մասնավորապես՝ ԳՔ/ԲԸ 4.01 (Բնապահպանական գնահատում), ԳՔ/ԲԸ 4.04 (Բնական միջավայրեր), ԳՔ/ԲԸ 4.09 (Վնասատուների դեմ պայքար), ԳՔ/ԲԸ 4.10 (Տեղաբնակներ), ԳՔ/ԲԸ 4.11 (Ֆիզիկական մշակութային ռեսուրսներ), ԳՔ/ԲԸ 4.12

(Հարկադիր տարաբնակեցում), ԳՔ/ԲԸ 4.36 (Անտառներ) եւ ԳՔ/ԲԸ 4.37 (Ջրամբարների անվտանգություն): Դրանք կարելի է գտնել հետեւյալ հղմամբ՝ https://policies.worldbank.org կայքում:

26. **Ստորագրման ամսաթիվ** նշանակում է երկու ամսաթվերից ամենավերջին ամսաթիվը, երբ Վարկառուն եւ Բանկը ստորագրել են սույն Համաձայնագիրը, եւ երբ նման սահմանումն սկսել է կիրառվել Ընդհանուր պայմանների Վարկային համաձայնագրի ամսաթվին կատարվող բոլոր հղումների նկատմամբ:

27. **Ենթադրամաշնորհ** նշանակում է վարկային միջոցներից տրամադրված դրամաշնորհը՝ Միկրոծրագիրը կամ ՆՄՀ ենթածրագիրը ֆինանսավորելու համար:

28. **Ենթադրամաշնորհային համաձայնագիր** նշանակում է Վարկառուի եւ Շահառուի միջեւ կնքված ցանկացած համաձայնագիր, որի համաձայն Վարկառուն Ենթադրամաշնորհ կտրամադրի Շահառուին՝ Միկրոծրագրի կամ Ենթածրագրի համար:

29. **Օժանդակ պայմանագիր** նշանակում է սույն Համաձայնագրի 2-րդ Առդիրի Ի.Ե Բաժնում նշված համաձայնագիրը:

30. **ԹԻՄՍՍ** նշանակում է մաթեմատիկայի եւ բնագիտության միջազգային միտումների հետազոտություն:

31. **Վերապատրաստում** նշանակում է Վարկառուի կամ ԾԻԳ-ի կողմից իրականացվող՝ Ծրագրի շրջանակներում ուսումնական ճամփորդությունների, վերապատրաստման դասընթացների, սեմինարների, աշխատաժողովների եւ վերապատրաստման հետ կապված այլ միջոցառումների մասով ծախսերը, ներառյալ՝ մասնակիցների, դասընթացավարների եւ վերապատրաստվողների համար նախատեսված ճանապարհածախսը եւ օրապահիկը, դասընթացավարների վարձավճարները, վերապատրաստման սարքավորումների վարձակալությունը, ուսումնական նյութերի մշակումը եւ վերարտադրումը, ինչպես նաեւ վերապատրաստման նախապատրաստման եւ իրականացման հետ կապված այլ միջոցառումներ:

Սույնով հավաստվում է, որ կցված տեքստը Հայաստանի Հանրապետության և Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի միջև 2022 թվականի հունիսի 9-ին ստորագրված «Կրթության բարելավման ծրագրի լրացուցիչ ֆինանսավորում» վարկային համաձայնագրի հայերեն պաշտոնական թարգմանությունն է:

Հայաստանի Հանրապետության
արտաքին գործերի նախարարություն